

ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻ ՎԱՎԵՐԱԳԻՐ

Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվում «Կաթողիկոսական դիվանի» 237 Ա թղթապանակի 112 վավերագիրը վերաբերում է մեծ հայագետ Գարեգին Հովսեփյանի մատենադարանապետության տարիներին: 1897 թվականից մինչև 1906 թվականը Գ. Հովսեփյանը զբաղեցրել է Մայր Աթոռի մատենադարանի պետի պաշտոնը: 1897 թ. դեկտեմբերի 14-ին նախկին մատենադարանապետ Սահակ Ամատունուց ստանալով թվով 3338 ձեռագիր, Գ. Հովսեփյանը ընդգծված համարներով նշում է այն բոլոր 13 պակաս ձեռագրերը, որոնք այս կամ այն պատճառով բացակայում են (վերը նշված թվաքանակը ներկայացնող ձեռագրական) հավաքածուից:

Վավերագիրը Գ. Հովսեփյանի հայտարարությունն է՝ ուղղված Մկրտիչ Կաթողիկոսին: Կարևորելով Մատենադարանի դերը, որպես միակ կենտրոն «հայագիտական մատենից», Գ. Հովսեփյանը Կաթողիկոսի ուշադրությունը հրավիրում է Մատենադարանի՝ մասնավորապես տպագիր գրականության բաժնի վրա: Առաջ քաշելով լիակատար հայագիտական գրադարան ունենալու անհրաժեշտության հարցը, խնդրում է Կաթողիկոսից վանական ծախսերի նախահաշվում նշանակել «գումար մի 300—350 ռ», որը հնարավոր կդարձնի «յընթացս քանի մի ամաց լրացուցանել զպակասորդս կարևոր մատենից ի հայ լեզու և աշխատութեանց եւրոպական գիտնականաց զհայագիտութենէ»:

Որպես պատասխան, «ի հետևանս խնդրոյ», 1901 թվականի հունվարի 22-ի դիվանի թիվ 83 գրությամբ, դիվանապետ Կորյուն վարդապետը հայտնում է Գ. Հովսեփյանին, որ Կաթողիկոսը հրամայել է «ի պէտս ծախսուց մատենադարանի» նշանակել 200 ռ. գումար: Այդ ժամանակից սկսած վանական կառավարությունը, հետագայում էլ Մատենադարանի տնօրինությունը, իրենց ֆինանսական հատկացումներից որոշ գումար են առանձնացրել գրքեր գնելու համար, որով հարստանում է Մատենադարանը, դառնում է Հայագիտական կենտրոն և նպաստում հայագիտության զարգացմանը:

ԳՈՀԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

Նորին Վեհափառութեան Հոգևոր Տեառն և Կաթուղիկոսի
Ամենայն Հայոց Տ. Տ. Մկրտիչ Ա.

Ամենախոնարհ Յայտարարութիւն

Ապաքէն ոչինչ զանխուլ է ի Ձէնջ, Հոգևոր Տէր, եթէ որպէս կարևոր է ի կեդրոնի լուսաւորութեան Հայաստանեայց եկեղեցւոյ, ունիլ մատենադարան ճոխ, եթէ ոչ ամենայն գիտութեանց, գէթ գիտութեանցն այնոցիկ զորս մարթ է ի մի բան հայագիտութիւն կոչել: Չիք այլուր հաստատութիւն այնպիսի համազգային, ուր հնախոյզք անցից անցելոց և հոգևոր կենաց նախնեաց մերոց կարող լիցին գտանել զկարևոր մատեանս, ամսաթերթս, օրաթերթս, առ յուսումնասիրութիւն ազգային և եկեղեցական պատմութեանց և մատենագրութեանց նախնեաց և ներկայ սերնդոց Հայոց: Արժան է ընդ հովանեաւ Հայրապետական աթոռոյդ առ ընթեր ճոխ գրադարանիս ձեռագրաց՝ տեսանել և զբարգաւաճումն այդպիսի կարևոր հաստատութեան:

Հոգևոր Տէր, յօրէ վանահայրութեան Ձերոյ ի Վարագ ցուցեալ էք զանձն Ձեր որպէս պաշտպան ազգային մատենագրութեան, որպէս առիթ և քաջալերիչ ժողովման և ուսումնասիրութեան հայրենի հնութեանց, ուստի և այժմ որպէս նուաստ պաշտօնեայ մատենադարանի Ձերդ Հայրապետական Աթոռոյ, համարձակիմ ամենախոնարհաբար հայցել զհայրապետական բարձր ուշադրութիւն ի վերայ հաստատութեանս այսորիկ: Եթէ Հոգևոր Տէրութիւնն Ձեր հաճեսցի հրամայել, զի մուծցի ի նախահաշիւ տարեկան ծախուց Մայր Աթոռոյ գումար մի 300—500 ր., մարթ է յընթացս քանի մի ամաց լրացուցանել զպակասորդս կարևոր մատենից ի հայ լեզու և աշխատութեանց եւրոպական գիտնականաց զհայագիտութենէ: Այսու Մատենադարանն Մայր Աթոռոյ հոչակեսցի ի ափիւռս Հայութեան որպէս միակ կեդրոն հայագիտական մատենից, մանաւանդ զի մասամբ ճոխանայ և նուիրակ բարեպաշտ անձանց և ժառանգութեամբ մատենից միաբանից հանգուցելոց:

Ամենախոնարհաբար յայտարարելով զայսմանէ Ձերդ Հոգևոր Տէրութեան իմ և մնամ խոնարհ ծառայ և որդի Գարեգին վարդապետ Յովսէփեան Մատենադարանապետ Մ. Աթոռոյ:

Ուղիղ է ընդ իսկականի

Գ. վ. Յովսէփեան (ստորագր.)

Ի 20-ն նոյեմբ. 1900 ամի
ի Ս. Էջմիածին

* * *

Ի 14 դեկտեմբերի 1897 ամի հրամանաւ Վեհափառ հայրապետի ի ներկայութեան շնորհ. Ներսէս սարկաւագ Տ. Միքայէլեանի և Պօղոս սարկաւագ Զուբարի անցի ստացայ մատենադարանապետ Արժ. Տէր Սահակ վարդապետից Մատենադարանի երեք հազար երեք հարիւր երեսուն և ութ ձեռագիրները, որոնցից պակաս էին հետևեալները.

Ա. ձեռ. ձեռ. 276 աւետարան, 341 աւետարան, 1701 և 1702 ժամանակագրութիւն Սամ. Անեցւոյ, 1776 պատմ. Թիլաիթի և Սոդրլոնի. 746 օրինակ կոնդակաց Աբրահամ և Ղազար կաթուղիկոսաց, 238 պաշտպանութիւն ուղղափառութեան Հայաստ. եկեղեցւոյ, որոց մասին Արժ. Սահակ վարդապետը ձեռագիրների ընդհանուր ցուցակի հետ 1892 թ. օգոստ. 28-ին Սինոդին մատուցած յայտարարութեամբ յայտնում է, թէ վերոյիշեալ ձեռագիրները չգտնուեցան մատենադարանում հաշուետուութեան ժամանակ:

Բ. ձեռ. 445 կանոնագիրք, որ Սինոդի 1896 թ. ձեռ. ձեռ. 1089 և 1715 հրամանների համաձայն յայտարարութեամբ յանձնել է Սինոդին և ստացել է նոյն թուին յուն. 27-ին Սինոդի ծառայող Պ. Լևոն Ալանեանը:

Գ. ձեռ. ձեռ. 1540 Արմատ հաւատոյ, Յովհաննու Մայրավանեցւոյ 126 ճառ, Յաղագս Նիկուէացոց, 641 պատմ. վարուց Եպիփանու Կիպրացւոյ և 637 Պատմ. Սրբոյ Կուսին Մարիամու, որոնք Վեհափառ Հայրապետի հրամանաւ, ըստ վկայութեան Հ. Սահակի յանձնուած էին շնորհ դպիր Գալուստ Տ. Մկրտչեանցին, որ և ստացած էր իւր ստորագրութեամբ:

Դ. ձեռ. ձեռ. 2074 Տօնացոյց և 396 բառգիրք, որոնք նոյնպէս Վեհափառ Հայրապետի հրամանի համեմատ յանձնուած էր Բաձր. Կարապետ վարդապետ Տ. Մկրտչեանին ուրիշ բազմաթիւ ձեռագիրների հետ, որ ստացած էր իր ստորագրութեամբ Գարեգին աբեղայ Յովսէփեան:

Ուղիղ է

Սահակ վարդապետ Ամատունի